

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ազարակի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) առաջատար մասնագետի (ծածկագիրը 3.1-4) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ազարակի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ազարակի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ քաղաքաշինության և հողդատագործման գծով առաջատար մասնագետի (ծածկագիրը 3.1-4) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար :

1. Պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթները՝

- ա) մասնակցում է համայնքի կոմունալ տնտեսության բնականոն գործունեության համար անհրաժեշտ աշխատանքներին,
- բ) մասնակցում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման և կառավարման համար անհրաժեշտ աշխատանքներին,
- գ) մասնակցում է համայնքային ենթակայության ճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցման, վերանորոգման, ասֆալտապատման և բարեկարգման կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքներին,
- դ) կատարում է համայնքային սեփականություն հանդիսացող բնակֆոնդի հաշվառման և անձնագրավորման աշխատանքներ,
- ե) կատարում է ՀՀ օրենսդրությամբ և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգերին համապատասխան բնակարանի կարիքավորների հաշվառման, բնակարանների բաշխման և համայնքային սեփականություն հանդիսացող բնակֆոնդի տրամադրման ու օտարման համար անհրաժեշտ աշխատանքներ,
- զ) մասնակցում է համայնքի վթարային բնակֆոնդի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար անհրաժեշտ աշխատանքներին,
- է) կատարում է համայնքի բնակչության բնակարանային պայմանների ուսումնասիրություններ, մասնակցում է սոցիալական բնակարանաշինության ծրագրերի նախագծեր մշակմանը և ներկայացնում բնակարանային պայմանների բարելավման հետ կապված այլ առաջարկություններ,
- ը) մասնակցում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների պահպանման և շահագործման ապահովման համար անհրաժեշտ աշխատանքներին,
- թ) մասնակցում է համայնքի ղեկավարի կողմից համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման և ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքներին,

- ժ) Քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է Աշխատակազմի աշխատանքային ծրագրերի իրականացմանը,
- ի) սահմանված կարգով մասնակցում է պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծերի նախապատրաստման աշխատանքներին:

2. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ա) առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի,
- բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության մասին», «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
- դ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- ե) տիրապետում է ռուսերենին (ազատ):

Մրցույթը կանցկացվի 2014թ-ի հոկտեմբերի 17-ին ժամը 15:00-ին, Ազարակի քաղաքապետարանի շենքում /ք. Ազարակ, Գարեգին Նժդեհ 5/:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Ազարակի քաղաքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/ ,

բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայացնում են անձնագրի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9:00 – 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 30-ը սեպտեմբերի 2014թ մինչև ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ազարակի քաղաքապետարանի աշխատակազմ /ք. Ազարակ, Գարեգին Նժդեհ 5, հեռ. (0286) 2-23-50, (0286) 2-25-67/ և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. (0285) 2-35-50/:

17.09.2014

X 

ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ՋԱՔԱՐՅԱՆ